Սարգիս Թորոսեան Ոսկերչեանց . .	2
Լուսպարոն Լուսեղէնեան Ատենեանց .	1
Սերովբէ Զորչոփեանց . . .	10
Խաչատուր Խարակիւլեանց . . .	3
Գէորգ Ակաչանեանց	1
Միքայէլ Տրապիզոնեանց . . .	6
Միքայէլ Զոռնեանց . . .	2
Յովհաննէս Սրմաղէշեանց . . .	2
Վարդերէս Սրմաղէշեանց . . .	2
Սերովբէ Թիմոռեանց	1
Յովակիմ Թիմոռեանց . . .	1
Քերովբէ Զաւխեանց	2
Յակոբ Օպերեանց	3
Աստուածատուր Օպերեանց . . .	3
Եպիփան Պոպոյեանց	3
Դշխունի Յարութիւնեան . . .	2
Հեղինէ Զարուհեան	2
Մինաս Խալիպեանց	3
Խաչատուր Սրմաղէշեան . . .	2
Վարդան Թիմոռեանց . . .	2
Դաւիթ Մուրատեան	1
Գրիգոր Ասմայեան	2
Կարապետ Լոյսպարոնեան Մալիեանց .	3
Խաչատուր Զաքիյեանց . . .	2
Սարգիս Խոճեանց	2
Պետրոս Խոճայեանց	1
Յակոբ Քաֆէնիքեանց . . .	1
Յովակիմ Խոճայեանց . . .	2
Մինաս Ապրամեանց	1
Նիկողայոս Կոզմեան. . . .	2
Արզար Կոզմեան	1
Աւագ Պախալեան	1
Եղիա Եղիազարեան	1
Յովհաննէս Խալբախճեան . . .	2
Սիմէոն Օտամանեանց	1
Մանուկ Տրապիզոնցեան . . .	2
Գաբրիէլ Տրապիզոնցեան . . .	3
Յարութիւն Խոճայեան . . .	1
Դանիէլ Սախայեանց	2
Կարապետ Ասմայեանց . . .	1

(Շարունակելի)

Խմբագրութեան Աբարար ամսագրոյ.

Արդարև իմ քրիստոնէական պարտաւորութիւնն և երիտասարդական աշխոյժ ազգասիրական հոգիս դադար չի տալիս երբէք ինձ այս տեղ ապի ի բերան լինելոյ, այլ կարող եմ համարձակապէս ի լուր կարդալ իմ սիրելի հեռաւոր և մերձաւոր ազգայնոց ականջի մէջ պատուական Լրագրիդ միջոցաւ այն լուրերը, որոնք յատկապէս ուրախութիւն կ'առթէին նոցա սրտից մէջ և պարծանք. որոնցից մէկ և այս։

Նուխուց գաւառի Այտինրուլաղ գիւղացի Գասպար Յովհաննէսեան իւր մանկութեան ժամանակումն դառն աղքատութեան երեսէն իւրեանց գիւղի մերձակայ Դաշաղջի անուն Տաճկաց (Թուրքերի) գիւղի Աֆենդի մօտ տարեկան ռոճկով ծառայում է քանի մի տարիներ. այս միջոցի մէջ յիշեալ Աֆենդին ջան ի գործ դրած ցայդ և ցերեկ սկսում է ընդդէմ մեր ուղղափառ եկեղեցւոյն այս տղային քարոզել և զանազան տեսակ հնարքներով որսալ սորա միտքը հաւատափոխութեան նպատակաւ, մինչև այն աստիճան, որ այնպիսի պատուով ընդունում է սորան ոչ որպէս ծառայ, այլ որպէս հարազատ որդի հոգալով առատաձեռն ամենայն նորան և ծնողաց պակասութիւնները ըստ նիւթականին. նա և փոքր ի շատէ Տաճկերէն կարդացնում. որոյ մոլորական քարոզութեանը հետևելով սոյն սա Գասպար Յովհաննէսեանն՝ սկսում է ծնողներից և բարեկամներից առանձին իմն եղանակաւ ընդունել Մահմետական կրօնը՝ և կատարել ըստ ամենայնի կրօնի պատկանեալ ծեսերը և արարողութիւնները միանգամայն։ Բաց յայսմանէ յետ քանի մի ամաց թելադրութեամբ և յորդորանօք ևս յիշեալ Աֆենդիի փախստական լինելով գնում է հարաւային կողմն Լէհաստանի Խնով կոչեցեալ նահանգն, և անդ սկսում մէկ գիւղի մէջ՝ նոր ի նորոյ հաստատել նոցա կրօնի մէջ ուրանալով միանգամայն քրիստոնէական եկեղեցւոյ ուղղափառ դաւանութիւնն՝ և թլփատուած լինում սպասաւոր նոցա մեչիդին։

Զկնի այսքան ժամանակաց ճշմարտապէս լսելով նորա մոլորութիւնն ազգականներն յիշեալ մոլոր Գասպար Յովհաննէսեանի՝ դիմեով առ

ոսս Արժանապատիւ Արիստակէս Վարդապետի Յաջորդի տեղւոյս առ այդ թափանցիկ խնդրանօք։ Երբ լսում է Յաջորդն՝ արձարձում է իւր մէջ ազգասիրական հոգին. իսկոյն կ'գրէ իւր կողմանէ տեղւոյն գաւառապետի վերայ փութանակի կապանօք յղել մեզ որուածը. զկնի զրութեան Արժ. Յաջորդին չանցած երկու ամիս՝ պահապանօք եկած հասաւ Նորահաւատ Գասպարը տեղւոյս Յաջորդարանն, ընդ որս Արժ. Յաջորդն զիշեր և ցերեկ քարոզութեամբ և քրիստոնէական վարդապետութեամբ զանազան համոզողական խրատներով սկսեց փարատել սորա մոլորութիւններն՝ բացատրելով ընդ նմին մի ըստ միոջէ քրիստոնէական հաւատոյ մասունքներն՝ և նոցա նշանակութիւնները, հազիւ հազ թէ կարողացաւ կրկին քրիստոնէական հաւատոյ հպատակ կացուցանել, տանելով ընդ իւր ի միասին եկեղեցին, մինչև այն աստիճանն հասաւ աշխատութիւնն Արժ. Յաջորդին՝ որ կարողացաւ հաստատել կատարելապէս քրիստոնէական կրօնքի մէջ. յետ որոյ առնելով բացատրութիւն, տեղւոյս Հոգևոր Կառավարութեան ատենի մէջ ներկայութեամբ անդամոց, թէ այդ ևս չըվստահանալ նոյն օրինակ անկարգութիւնների և մոլորութիւնների ձեռնամուխ լինելոյ և այլն։

Ուրեմն խնդրեմ Աջ-ջ-ի-ը տպագրութեան տեղի ունենալ այս իմ առաջնանուէր մտաց արգասիքը իւր պատուական Ամսագրի թերթերու մէջ ի խրախոյս ոչ միայն ինձ՝ այլ և բոլոր ուսումնատենչ երիտասարդաց Յաջորդութեանս Նուխւոյ։

Ա-ոտ Մ. Սարգիսեան Բ-ողդ-ան-ցոյ.

ի 15 Հ-ի-ն-մ-բ-ի 1870 -դ

ի Գ. Ն-ա-խ։

Խոշ-ա-գր-ա-կան Ա-բ-ա-ր-ա-տ ա-մ-ա-գ-ր-ոյ.

Յետագայ աղջոգուտ ուրախալի ձեռնարկութիւն Գօրուց Հայ հասարակութեան համար ոչ սակաւ ուրախութեան առիթ եղաւ։ Գօրուց քաղաքացիներէն Պատուարժան անձինք Գրիգոր Դուլիշամբարեանց, Գրիգոր Դաւթեանց և Նոյոյ Ամիրա-զնանց ի վաղուց հետէ նկատողութեան տակը ունենալով իրենց համաքաղաքացի Հայկազուն օրիորդաց բարոյական թշուառութիւնը, և նոցա իրենց մայրենի լեզուէն և ուսմանէն զրկվիլը, մտադիր եղեն այսպիսի ապարդիւնութեան առաջն առնուլ, և օրիորդական վարժարան մի բանալ Գօրի քաղաքի մէջ, որոյ ներքին և արտաքին գրութիւնը ապահովել իրենց սեպհական ծախսով, մինչև որ կարողանան ուսումնարանը կառավարելու համար արդեանց աղբիւր մը գտնել և բարերարաց ստորագրութիւնները բաղմացնել։ Բայց վերոյիշեալ Ազգասէր անձինք թէ և հին ուսումնարանի դահլիճները արդէն վերանորոգած էին, որ կ'գտնվի սուրբ Աստուածածին մայր եկեղեցւոյ գաւթի մէջ, և վարժարանի վերաբերեալ ամեն հարկաւոր պիտոյք նախապատրաստած էին, բայց դեռ ևս իրենց ներկայ նպատակը անկատար թողնելով՝ նախ և առաջ առանձին խնդրագրոյ հետ մատուցանելով Վեհափառ Կաթուղիկոսին վարժարանի կարգադրութեանց ցուցակը, և յայտնելով իրենց այսպիսի ուրախաւէտ ձեռնարկութիւնը՝ խնդրեալ էին Նորին Վեհափառութենէն հաստատել զիրենք նոյն վարժարանի Հոգաբարձական պաշտօնի մէջ, և շնորհել իրենց ուսումնարանի բացման իրաւունքը։ Վեհափառ Հայրապետն ևս պատուելով նոցա այս բարենախանձ նպատակը՝ հանդերձ իւր Հայրական օրհնութեամբ բարեհաճեալ էր հաստատել Նորանց նոյն պաշտօնի մէջ, և իւր պատուական կոնդակաւ իրաւունք շնորհել յառաջ վարել իրենց այսպիսի ազգասիրական եռանդ և ջանացողութիւնը։ Ուստի յիշեալ Նորահաստատ Հոգաբարձութիւն Աստուածարեալ Վեհափառ Հօր օրհնութենէն և ներկայ թղթատուութենէն խրախուսվելով՝ օրով առաջ հրաւիրագիրներով հրաւիրեալ էր Գօրուց և Նորա վիճակի քահանայքը և ականաւոր անձինքը նոյն վարժարանի բացման և օրհնութեան հանդիսին մէջ ներկայ լինելու։ որ կատարվելու էր Հոկտեմբեր ամսոյս 4 ին սուրբ Աստուածածին Աւագ եկեղեցւոյ գաւթում սուրբ պատարագը աւարտելէն զկնի. ուստի իմանալով ներկայ շգեղ հանդիսակատարութեան սահմանեալ ժամանակը՝ ամենքն էլ խուռն բազմութեամբ դիմեցին նախ՝ դէպի եկեղեցի սուրբ պ-